նրան նստեցնում կաթողիկոսության աթոռին, որտեղ նա մնում է մի տարի և երկու ամիս։

Սակայն, հայ բարձր հոգևորականությունը Դիոսկորոսին չի ընդունում, նրա անունը մյուս հայրապետների շարքում չի հիշատակում, նրա ձեռնադրության ժամանակ եպիսկոպոսները, քահանաները և հայրապետները չեն ներկայանում։ Դրան հակառակ, Դիոսկորոսը կաթողիկոս դառնալով բազմաթիվ մարդկանց եպիսկոպոս է ձեռնադրում, որոնց թվում նաև այնպիսիներին, որոնց նախորդ կաթողիկոսներն իրենց հայտնի հանցանքների համար մերժել էին։ Այդ բոլորի հետևանքով հայոց աշխարհի եպիսկոպոսներն ու վարդապետները չեն ենթարկվում Դիոսկորոսին և նզովում են թագավորին ու բոլոր հայոց նախարարներին՝ եկեղեցու մեջ հակառակություն մտցնելու պատճառով։ Թագավորն ու իշխանները անեծքի ահից սարսում են և այդ պատճառով Պետրոսին առաջարկում են նորից յուր աթոռի վրա նստել, բայց նա երկար ժամանակ հանձն չի առնում, մինչև որ թագավորն ու հայոց բոլոր իշխանները թուղթ են գրում Աղվանք, խնդրելով Աղվանից աշխարհի կաթողիկոս Հովսեփին գալ Անի տեր Պետրոսին բարեխոսելու և աթոռի վրա հաստատելու համար։

Եվ հայոց ՆՁԷ (487=1038) թվականին Անիում հրավիրվում է մեծ ժողով, որին մասնակցում են մոտ 4000 մարդ՝ եպիսկոպոսներ, հայրապետներ, կրոնավորներ, վարդապետներ, ազատներ և իշխաններ, և այդ ժողովի գլուխը կանգնում է Աղվանից Մերունի Հովսեփ կաթողիկոսը։

Այդտեղ պատվազուրկ են անում և հայրապետության աթոռից իջեցնում Դիոսկորոսին, դատապարտելով նրան։ Նրա ձեռնադրածներին էլ բանադրությամբ մերժում են և հեռացնում, որպեսզի նրանցից որևէ մեկը քահանայության կարգը չկարողանա կոչվել, իսկ տեր Պետրոսին հաստատում են հայրապետության աթոռի վրա։ Այդպիսով եկեղեցին խաղաղվում է, և Դիոսկորոսը, շատ ամաչելով իր գործից, վերադառնում է Սանահնի վանքը[1]։

Կիրակոս Գանձակեցին վերջին դեպքերն այլ կերպ է պատմում։ Նա գրում է, որ երբ Անիի ռամիկ բազմությունը տեսնում է, որ կաթողիկոսը բանտից ազատվել է, ջրօրհնեքի ժամանակ հանդգնաբար հարձակվում է Դիոսկորոսի վրա, երեսի քողը պատռում, որովհետև այն ժամանակ կաթողիկոսը քողով էր դուրս գալիս և քաղաքից վտարում է նրան, իսկ նրա տեղ կաթողիկոս է դնում Պետրոսին։ Դիոսկորոսը սրտմտությամբ վերադառնում է Սանահին և այնտեղ էլ մեռնում[2]։

Այս դեպքերի պարզ նկարագրությունից իսկ երևում է, որ անհատների հարց չի եղել այդ կաթողիկոսներից մեկը մյուսով փոխարինելու ձգտումը, այլ այդ բանն ունեցել է քաղաքական աստառ։

Ուժեղ ներքին պայքար է տեղի ունեցել բարձր հոգևորականության և աշխարհիկ ֆեոդալների միջև, և աշխարհիկ ֆեոդալները թագավորի գլխավորությամբ աշխատել են սահմանափակել հոգևորականության իրավունքները։ Բանն այնտեղ է հասել, որ կաթողիկոսը փախել է Վասպուրական և այնտեղ մնացել 4 տարի։ Պետրոս Գետադարձի այդ քայլը փաստորեն նշանակում էր կաթողիկոսական աթոռը Բագրատունիների սահմանից դուրս բերել և երկրի հոգևոր կենտրոնը փոխադրել Վասպուրական, որ մեծ հարված էր Բագրատունյաց թագավորության համար։ Այդ է պատճառը, որ թագավոր Հովհաննեսը, նախարարների հետ միացած, երդման թուղթ է ուղարկում Պետրոս Գետադարձին, որ նրա աթոռի շահերը բարձր կպահեն և կենթարկվեն նրան, բայց բերել տալով նրան Անի, ձերբակալում և բանտ են դնում, իսկ նրա փոխարեն կաթողիկոս են ընտրում Սանահնի վանահայր «մեծ հռետոր» Դիոսկորոսին, որ հաստատվելով կաթողիկոսական աթոռի վրա, բոլորովին այլ քաղաքականություն է վարում։ Չնայած այն բանին, որ ինքը բազմամյա հոգևորական էր և ուներ մեծ հեղինակություն, համարվում էր լավագույն հռետոր, բայց նա առաջ է քաշում առաջներում զանազան հանցանքների մեջ մեղադրված, մերժված և բանտարկված մարդկանց։ Հասկանալի է, որ դրանք ոչ թե քրեական հանցագործներ, այլ կրոնական դոգմաների դեմ դուրս եկած հոգևորական-

[1] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 75—78։
[2] Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի Վ. Գանձակեցւոյ, էջ 84։